ԿԱՐՃԻՔ

Ալեսա Միսակի Դուրգարյանի «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» խորագրով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 124 էջ՝ ներառյալ 4 աղյուսակներ, 11 տրամագրեր և 12 գծապատկերներ:

Գրականության ցանկով ներկայացված են ընդամենը 85 աշխատություններ, որոնցից 21-ը՝ հայերեն, 16-ը՝ ռուսերեն, մնացածը՝ անգլերեն լեզուներով:

Ներածությունում, ինչպես հարկն է, հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և ճշգրտորեն ներկայացնում է դրա բովանդակությունը: Ի նկատի ունենալով այս հանգամանքը և այն, որ սեղմագիրը հասանելի է մանկավարժական հանրությանը, չկա անհրաժեշտություն վերարտադրելու ատենախոսության բովանդակությունը՝ բաժին առ բաժին, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մի շարք կարևոր դրվագների:

Թեման արդիական է, այն վերաբերում է վերապատրաստումների արդյունավետության խնդրին՝ պասիվ մոդելից ակտիվ շարունակական մոդելի անցումն է, ինչը վերապատրաստումների կարևոր մարտահրավերներից է:

Աշխատանքում ներկայացված մոդելը հիմնված է «գործողության հետազոտության» (action research) սկզբունքների վրա: Աշխատանքն ունի արժեքավոր գործնական արդյունք, (գլուխ 3.2-ի ծրագիրը և 3.3-ի մոդելը), ուժեղ փորձարարական եզրահանգումներ: Այն անդրադառնում է ոչ թե ուղղակի առցանց

վերապատրաստմանը, այլ մոդելը հնարավորություն է տալիս պլանավորումից առաջ գինել ուսուցչին թվային գործիքակազմով (ռեսուրսներ)։

Հաջորդ առանձնահատկությունը վերապատրաստումները երկու հարթությամբ՝ տարաժամանակյա (նյութերի ուսումնասիրություն) և համաժամանակյա (քննարկումներ) իրականացնելն է։ Մոդելը կապվում է ՀՀ ատեստավորման համակարգի հետ։ Մոդելից զատ տրված է բովանդակությունը՝ տասշաբաթյա ծրագիր կոնկրետ գործիքակազմով (Canva, Padlet, Edpuzzle . . .) և որպես շոշափելի ապացույց՝ պորտֆոլիոն։ Հեղինակը հիմնավորել է այն որպես շարունակական զարգացման մանկավարժական միջավայր։

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտարկումներ.

1. Դրույթները թույլ են ձևակերպված, բացառությամբ՝ 5-րդ դրույթի, որը ուժեղ է ձևակերպված։ Դրույթներից 1-ը, 2-ը, 4-ը աշխատանքի նախադրյալներ են կամ կարելի է ասել՝ փաստեր։
2. Վարկածը ձևակերպված է որպես աշխատանքային պլանի կրկնություն («արդյունավետությունը կբարձրանա, եթե ուսումնասիրվեն մոտեցումները և մշակվի ծրագիրը»), ինչը գիտական ենթադրություն չէ։
3. Եզրակացություններում առկա են մասնավոր դեպքեր (օրինակ՝ Ինդոնեզիայի փորձը), որոնք պետք է լինեին տեքստում, իսկ եզրակացություններում տեղ գտնեին միայն ընդհանուր արդյունքները։
4. Որոշ դեպքերում (օրինակ՝ Տրամագիր 1, 2) գծապատկերները ներկայացված են, բայց դրանց բովանդակությունը տեքստում վերլուծվում է շատ համառոտ, առանց թվային տվյալների խորքային համադրման։

Այսուհանդերձ, ատենախոսը կատարել է հանրակրթության ոլորտի բարեփոխմանը նպաստող օգտակար աշխատանք՝ հանդես գալով որպես գիտահետազոտական ունակություններով օժտված մասնագետ։

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է։ Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով։

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի հրապարակումներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ալեսա Միսակի Դուրգարյանի «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Ա. Մկրտչյան

Մ.Ա. Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մ. Իսպիրյան